ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՅԻՍԻ 12, 2006թ., ՀԱՍՏԱՏՎԱԾ 2-ՐԴ ԿԱՐԾԻՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

I. Ընդհանուր նկատառումներ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը շնորհակալ է Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական Կոմիտեի համակողմանի և անաչառ կարծիքի համար և պատրաստակամ է շարունակել Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը, ինչպես նաև՝ Խորհրդատվական Կոմիտեի դիտարկումներից բխող առաջարկությունները և հանձնարարականները՝ Շրջանակային կոնվենցիայի ոգուն համապատասխան: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սիրով պատրաստ է նաև շարունակել երկխոսությունը Խորհրդատվական Կոմիտեի հետ՝ Կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների պրոբլեմները քննարկելու, լուծելու ուղղությամբ: Դրանք, անկասկած, շահեկանորեն կանդրադառնան ազգային փոքրամասնությունների հանդեպ երկրի ընդհանուր քաղաքականության ընթացքի վրա: Այնուամենայնիվ Խորհրդատվական Կոմիտեի 2-րդ կարծիքի առանձին հարցադրումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ունի մեկնաբանություններ կամ ճշգրտումներ, որոնք ներկայացվում են սույն փաստաթղթով:
2. Հայաստանի հանրապետության կառավարության համապատասխան գերատեսչությունները ստացել են Խորհրդատվական Կոմիտեի 2-րդ կարծիքը: Այն տրամադրվել է նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող հասարակական կազմակերպություններին և Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդականին կից գործող ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդին: Խորհրդատվական Կոմիտեի կարծիքը կտեղադրվի Հայաստանի Հանրապետության կառավարության կայքում, Խորհրդատվական Կոմիտեի կարծիքի վերաբերյալ Հայաստանի Հանրապեության կառավարության կողմից տրվող սույն մեկնաբանություններն ընդունվելուց անմիջապես հետո:

II. Խորհրդատվական Կոմիտեի հիմնական եզրահանգումների և մեկնաբանությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պարզաբանումները և առարկությունները

a. Խորհրդատվական Կոմիտեի հիմնական բացահայտումների շուրջ

3. Խորհրդատվական Կոմիտեի 2-րդ կարծիքի 6-րդ պարագրաֆում ասվում է, որ «ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից մի քանիսը տեղեկացվել էին Պետական Զեկույցի նախապատրաստման մասին»: Իրականում Պետական Զեկույցի նախապատրաստման մասին տեղեկացվել են ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների գրանցված բոլոր հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև առանձին մարդիկ՝ մտավորականներ, մշակույթի գործիչներ և այլն: Այդ մասին հայտարարվել է 2004թ. մարտի 6-ին Խորհրդատվական Կոմիտեի 1-ին կարծիքի հրատարակման շնորհանդեսի առիթով տեղի ունեցած ընդարձակ քննարկման ժամանակ: Միաժամանակ

ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հրավիրվել էին Պետական Զեկույցի շարադրմանը մասնակցելու: Պետական Զեկույցի շարադրանքի առաջին տարբերակը տրամադրվել է բոլոր հասարակական կազմակերպություններին՝ կարծիք արտահայտելու նպատակով: Արձագանքել են միայն քրդական և եզդիական համայնքները:

4. 10-րդ պարագրաֆում ասվում է, որ «ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը դժգոհ են իրենց մշակույթը և լեզուն պահպանելու գործունեության համար նպատակաուղղված պետական աջակցության մակարդակից»: Ցավոք, Խորհրդատվական Կոմիտեն չի հստակեցնում, թե կոնկրետ աջակցության ի՞նչ ձևերից են դժգոհել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Եթե խոսքը գնում է զուտ ֆինանսական գումարների մասին, ապա հասարակական բազմաթիվ կազմակերպություններ Հայաստանում հիրավի խնդիր ունեն պետության սուղ ֆինանսական օժանդակության հետ: Սակայն եթե խոսքը վերաբերում է ազգային փոքրամասնությունների կրթա-մշակութային նախաձեռնություններին պետական օժանդակության մասին, ապա գործնականում համարյա բոլոր նախաձեռնությունները պետության կողմից օժանդակություն են ստանում:
5. 12-րդ պարագրաֆում Խորհրդատվական Կոմիտեն գտնում է, որ «կան թերություններ ազգային փոքրամասնությունների լեզվով դասագրքերի և այլ գրականության որակի ապահովման, ինչպես նաև՝ ուսուցիչների վերապատրաստման և նախադպրոցական կրթության ոլորտում»: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես հայտնի է, ռուսերենից բացի, այլ փոքրամասնությունների լեզուներով դասագրքերը նոր են սկսում հրատարակվել, և բնականաբար, դրանք դեռևս անցնում են ու կանցնեն փորձաշրջան: Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստմանը, ապա պետք է ասել, որ Հայաստանի Հանրպետությունում ընթացքի մեջ են ինչպես կադրերի պատրաստման, այնպես էլ նրանց վերապատարաստման ծրագրերը:
6. 13-րդ պարագրաֆում արտահայտված մտահոգությունն այն մասին, որ «որոշ ազգային փոքրամասնություններից կրթությունից դուրս մնացած աղջիկների տոկոսը բավականին բարձր է», ինչպես հուսով ենք, համոզվել են մոնիտորինգի խմբի փորձագետները, նախ և առաջ Հայաստանի Հանրապետության իշխանությունների մտահոգությունն է և գործնական քայլեր են արվում այդ խնդիրը լուծելու ուղղությամբ:
7. 15-րդ պարագրաֆում ասվում է, որ «Որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ գտնում են, որ ռուսերեն լեզուն իրենց փոքրամասնության լեզուն է և ռուսերենով կրթությունն իրենց երեխաների համար իրենց կողմից գերադասելի է: Անհրաժեշտ է այնպես անել, որ հայերենով կրթության մեծացումը չվնասի փոքրամասնությունների ցանկալի լեզվին»: Այս կապակցությամբ պետք է ասել, որ Հայաստանի Հանրապետությունում որևէ արգելք չկա՝ փոքրամասնության կողմից ընտրված ցանկացած լեզվով ուսուցում կազմակերպելու: Սա Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացու իրավունքն է: Այլ խնդիր է, որ պետական բյուջեյից ֆինանսավորվող հանրակրթական դպրոցներում ուսուցումը կատարվում է երկրի պետական լեզվով՝ հայերենով, ազգային փոքրամասնությունների համար լրացուցիչ ունենալով մայրենի լեզվի, մշակույթի և պատմության ուսուցման դասաժամեր: Եթե Հայաստանի Հանրապետության որևէ ազգային փոքրամասնություն մայրենի լեզվի փոխարեն գերադասում է մեկ այլ լեզու, տվյալ դեպքում՝ ռուսերենը, դա նրանց իրավունքն է: Սակայն Կոմիտեի ուշադրությունը կուզենայինք հրավիրել մի կարևոր դրույթի վրա. մոնիտորինգի խումբը հանդիպել է ազգային փոքրամասնությունների

առանձին լիդերների կամ նրանց առանձին ՀԿ-ների ղեկավարների հետ և լսել նրանց կարծիքը: Նույն էթնիկ համայնքների այլ լիդերներ և այլ ՀԿ ղեկավարներ ունեն այլ կարծիք: Բոլոր դեպքերում էթնիկ համայնքների առանձին լիդերների և ՀԿ ղեկավարների կարծիքը դեռևս էթնիկ համայնքի կարծիքը չէ: ՀՀ էթնիկ համայնքների առանձին մարդիկ, ինչպես ՀՀ ցանկացած քաղաքացի, կարող է իր երեխաների կրթության լեզվի վերաբերյալ ունենալ գերապատվություններ և իրավունք ունի այդ գերապատվությունների համաձայն կազմակերպել կրթությունը: Ինչ վերաբերում է պետության բյուջեյից ֆինանսավորվող կրթությանը, ապա այստեղ լեզվի հարցում երկրի ազգային փոքրամասնությունների հանդեպ քաղաքականությունն ուղղված է ա/ պետական լեզու + մայրենի /կամ՝ փոքամասնության/ լեզու + այլ լեզուներ; բ/ մայրենի /կամ՝ փոքամասնության/ լեզու+ պետական լեզու + այլ լեզուներ: Դրա հաստատումն է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը՝ «Կրթության լեզուն», որը հստակ արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ»: Պետք է ավելացնել նաև, որ Պետական Զեկույցում «մայրենի լեզու» եզրը գործածված է «փոքրամասնության լեզու» իմաստով, այսինքն՝ այն լեզուն, որը փոքրամասնությունն ինքն անվանում է որպես իր կողմից ընտրված մայրենի լեզու: ՀՀ էթնիկ համայնքների կողմից մայրենի լեզվի ընտրույթը տալիս են մարդահամարի նյութերը:

8. 16.-րդ պարագրաֆով Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ «Չնայած առաջին վերահսկման փուլից սկսած որոշ առաջընթացին, փոքրամասնության լեզուների առկայությունը լրատվամիջներում դեռ սահմանափակված է, հատկապես՝ հեռուստատեսությամբ: Մնացել են իրավական սահմանափակումներ Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակվող փոքրամասնությունների լեզուներին տրամադրված ժամաքանակին»: Իրականում Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է Շրջանակային Կոնվենցիայի Հոդված 9-ի պահանջները կատարելու իր մտադրությանը, այդ թվում նաև՝ դրա երրորդ կետը, այն է՝ «Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորությունը»: Այս իմաստով Հայաստանի Հանրապետության իրավական նորմերի որևէ խոչընդոտ չկա ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից չի արձանագրվել որևէ խոչընդոտ պրակտիկայում նույնպես: Սահմանափակում կա բացառապես Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակվող փոքրամասնությունների լեզուներին տրամադրված ժամաքանակի վերաբերյալ՝ միանգամայն օբյեկտիվ պատճառներով:

9. 17-րդ պարագրաֆով Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ «Ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձիք ներկայացված են ընտրովի մարմիններում, մասնավորապես այն տարածքներում, որտեղ նրանք ապրում են մեծ քանակով, բայց նրանց համար դժվար է ձեռք բերել ազգային ընտրովի մարմիններում մուտք գործելու հնարավորություն»: Պետք է ասել, որ Հայաստանի ընտրական օրենսգիրքն անցել է Եվրոպական Խորհրդի

փորձաքննություն, և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատերը գտնում են, որ ազգային մակարդակով ընտրովի մարմիններում ընդգրկվելու իմաստով իրենք դժվարություններ չեն տեսնում իրենց փոքրամասնության պատկանելու առումով:

10. 18-րդ պարագրաֆով Խորհրդատվական կոմիտեյի արտահայտած մտահոգությունն այն մասին, որ «Իշխանությունների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև կապը երբեմն դժվար է, չնայած խորհրդակցական մարմինների առկայության, այնպիսին, ինչպիսին է Ազգային փոքրամասնությունների համար Համակարգող խորհուրդը: Փոքրամասնությունների ներկայաուցիչները մտահոգված են փոքրամասնության զրուցակիցների հետ հաղորդակցության ուղիները սահմանափակելու փորձերով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ազգությամբ ոչ հայ քաղաքացիների և էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ օրինագծի համատեքստում» հարուցել է Հայաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների զարմանքը: Խորհրդատվական Կոմիտեյի սույն՝ երկորդ կարծիքի քննարկման ժամանակ նրանք գտան, որ իրենց հետ հանդիպման ժամանակ, ըստ երևույթին, փորձագիտական խումբն ունեցել է սխալ ընբռնում: Նրանք այն կարծիքին չեն, որ ներկա օրինագիծը կարող է դժվարություններ առաջացնել իշխանությունների հետ հաղորդակցվելու իրենց հնարավորությունների նկատմամբ:

b. Խորհրդատվական կոմիտեի «հոդված առ հոդված » վերլուծության շուրջ

Շրջանակային կոնվենցիա, հոդված 3

11. 24-րդ պարագրաֆում Խորհրդատվական Կոմիտեն հորդորում է, որ ներկայումս Շրջանակային կոնվենցիայի կիրառման մեջ չընդգրկված ազգային փոքրամասնությունները, մասնավորապես փոքրաթիվ գնչուներն ու ազերիները, հետագայում, հենց որ կամենան, կարողանան օգտվել Շրջանակային կոնվենցիայի պաշտպանությունից: Այս առնչությամբ Խորհրդատվական Կոմիտեին տեղյակ ենք պահում, որ Հայաստանի Հանրապետությունում իսկապես կան տարբեր փոքրաթիվ էթնիկ համայնքներ, ովքեր ընդգրկված չեն Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի մեջ, այդ թվում՝ ուդիներ, աբխազներ, պարսիկներ, աբազներ, մոլդավացիներ, ռումիններ, մորդվաներ, բուլղարներ, ինգուշներ, թաթարներ, օսեր, լատիշներ, լիտվացիներ և այլն: Ինչ վերաբերում է գնչուներին և ազերիներին, ապա ինչպես և Հայաստան երկրորդ այցելության ժամանակ Խորհրդատվական Կոմիտեին տեղեկացվել է, Հայաստանի Հանրապետությունում դասական իմաստով գնչուական էթնիկ համայնք չկա: Հայ-բոշաները, որոնց պարբերաբար ներկայացնում են որպես գնչուներ, իրականում էթնիկ համայնք չեն, մեծապես ինտեգրված են հայկական էթնիկ համայնքին և գերադասում են, որ իրենց որպես գնչու չներկայացնեն: Բոլոր դեպքերում Հայաստանի Համրապետությունում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ քաղաքականությունը լիովին բաց է, թափանցիկ և պատրաստակամ՝ համագործակցելու բոլոր էթնիկ համայնքների հետ, անկախ այն բանից՝ ընդգրկված են նրանք ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում, թե ոչ:

12. 28-րդ, 31-րդ և 115-րդ պարագրաֆներում Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ կոորդինացիոն խորհրդի անդամների մեծ մասը դեմ են ազգային փոքրամասնությունների մասին առկա օրենքի նախագծին, օրենքի նախագծի տվյալ տարբերակի դեպքում գերադասում են առհասարակ ազգային

փոքրամասնությունների մասին օրենք չունենալ: Նրանց կարծիքով առաջարկված օրենքի նախագիծը որևէ լրացում չի բերում առկա վիճակին, և երկրորդ՝ տագնապ կա, որ կրթության ոլորտում ազգային փոքրամասնությունների կողմից նախընտրված լեզուն կարող է փոխարինվել պետության կողմից պարտադրվող «մայրենի լեզվով», և որ «ազգային փոքրամասնությունները ներկայացնող մի շարք անձիք, այդ թվում՝ ոչ ռուսական էթնիկ ծագում ունեցող փոքրամասնություններն իրենց երեխաների համար առավելությունը տալիս են ռուսերեն կրթությանը»: Իրականում Օրենքի նախագծին դեմ ստորագրած ոմանք, որոնք օրենքի նախագիծը չէին ընդունում 2005թ. տարբերակով, օրենքի լրամշակումից հետո 2006թ. իրենց հետ քննարկված տարբերակով լիովին համաձայն են օրենքի նախագծի հետ: Դրանիցից են գերմանական, լեհական, ռուսական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունների ղեկավարները: Դրանից բացի, առանձին էթնիկ համայնքների տարբեր հասարակական կազմակերպություններ տարբեր կարծիք ունեն օրենքի նախագծի նկատմամբ: Օրինակ, հրեական, ասորական, եզդիական, հունական էթնիկ համայնքների ներկայացուցիչների մի մասը կողմ են օրենքի նախագծին, մյուս մասը՝ դեմ: Այսպիսով չի կարելի ասել, որ համակարգող խորհրդի անդամների մեծ մասը դեմ են օրենքի նախագծին: Ընդհակառակն, համակարգող խորհրդի անդամների երկու երրորդը կողմ են օրենքի նախագծին: Այնուամենայնիվ Օրենքի նախագիծն, անշուշտ, դեռևս կանցնի քննարկումներ, այդ գործընթացում հաշվի կառնվեն փոքրամասնությունների կարծիքները, այն կբերվի Շրջանակային կոնվենցիայի հետ համաձայնության և բոլոր դեպքերում այն կանցնի միջազգային փորձաքննություն: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնությունների կողմից կրթության նախընտրած լեզվին, և «մայրենի լեզու» եզրի ընկալմանը, ապա սույն հարցերի պատասխանն արտացոլված է 15-րդ պարագրաֆի մեկնաբանություններում:

13. 29-րդ պարագրաֆում արտահայտված այն մտահոգությունը, որ «օրինագիծը փոքրամասնությունները ներկայացնող անձանց էթնիկ պատկանելությունը պաշտպանելու և բարձրացնելու համար ընդգրկում է քաղաքացիության չափանիշ: Խորհրդատվական կոմիտեն քննարկել է, որ այսպիսի ռազմավարությունը համապատասխան չափով չի արտացոլում անկեղծության և ճկունության ոգին պահանջված երրորդ հոդվածի և Շրջանակային կոնվենցիայի այլ դրույթների առնչությամբ», միանգամայն ընդունելի է և առաջիկայում օրենքի նախագծում կարվեն համապատասխան փոփոխություններ:

14. 30-րդ պարագրաֆում արտահայտված այն մտահոգությունը, թե «օրինագիծը այնպես, ինչպես հիմա այն կա, ներառում է «Ազգությամբ ոչ հայ քաղաքացիների» և «էթնիկ փոքրամասնությունների» հասկացությունների սահմանումը: Նրանք, ովքեր չեն համապատասխանում այս չափանիշներին և չեն պատկանում բնակչության մեծամասնությանը, կհամարվեն «Ազգությամբ ոչ հայ քաղաքացիներ» և օգուտ կստանան տարբեր երաշխիքներից, քան «էթնիկ փոքրամասնությունները» ներկայացնող անձիք: Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ այս տարբերությունը կարող է ավարտվել մարդկանց կամ խմբերի մեկնաբանությունների անարդարացի տարածայնությամբ», հիմնավորված չէ օրենքի նախագծի տրամաբանությամբ: Օրինագծով ներառված բոլոր անձանց և խմբերի իրավունքները բացարձակապես հավասար են, իրավունքի իմաստով որևէ տարբերակում չկա: Այլ խնդիր է, որ կառավարությունը կարող է առարկայորեն և առավել արդյունավետ օգտակար լինել օգնության առավել մեծ կարիք ունեցող խմբերին:

15. 31-րդ պարագրաֆում Օրինագծում «Փոքրամասնության լեզու» և «Մայրենի լեզու» եզրերի օգտագործման շուրջ մտահոգությունների վերաբերյալ պատասխանն արտացոլված է Խորհրդատվական Կոմիտեի 15-րդ պարագրաֆի մեկնաբանություններում /տես սույն կարծիքի 7-րդ պարագրաֆը/:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 4

16. 41-րդ պարագրաֆում Խորհրդատվական կոմիտեն կիսում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծամասնության անհանգստությունն այն մասին, որ ՀՀ կառավարության կողմից տրամադրվող օժանդակությունը շատ փոքր է՝ որպեսզի ապահովվի հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության հավասար հնարավորությունները: Իրականում ՀՀ իշխանությունները հասարակական կյանքին մասնակցության հավասար հնարավորություններ են ընձեռում հասարակության բոլոր շերտերին և խմբերին՝առանց ազգային խտրականության, իսկ երբեմն էլ՝ պոզիտիվ խտրականությամբ հնարավորություն ընձեռելով ազգային փոքրամասնություններին՝ օգտվելու լրացուցիչ, իրենց էթնիկության պահպանմանն ու զարգացմանը նպատակաուղղված գործունեությունից: Ազգային փոքրամասնությունների առանձնահատկություններից ելնելով և ազգային փոքրամասնությունների հասարակական ակտիվությունը խթանելու նպատակով լրացուցիչ աջակցության ձևեր են տրամադրվում հենց ազգային փոքրամասնություններին, իրենց մշակույթը ներկայացնելու համար երաժշտական փառատոներ, կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ և այլն: Բացի կոնկրետ ազգային փոքրամասնությունների համար ամեն տարի կազմակերպվող միջոցառումներից, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին ընդգրկվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները (Տիկնիկային արվեստի առաջին և երկրորդ հանրապետական փառատոները, Լուսանկարչական արվեստի առաջին փառատոնը, թատերահամերգային բազմաթիվ միջոցառումներ և այլն): Մշակութային ծրագրերին աջակցելուց բացի, պետական միջոցներից աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների մամուլին և նրանց լեզուներով գրքերի հրատարակությանը, ռադիոհաղորդումներին: Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից օժանդակություն է ցուցաբերվում ընթացիկ, չծրագրավորված միջոցառումներին (ներկայացումներ, հուշակոթողների պատրաստում), Կրթության և գիտության նախարարության կողմից՝ ազգային կադրերի պատրաստմանը: Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնություններին պետական բյուջեյից տրամադրվող առանձին դրամաշնորհին, ապա պետք է ասել, որ դրամաշնորհի բաշխման կարգը որոշում են իրենք՝ ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները համակարգող խորհրդում: Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության կողմից քանիցս առաջարկվել է քննարկել դրամաշնորհի օգտագործման երկու տարբերակ, ա/ ըստ էթնիկ համայնքների կարիքների, և բ/ ըստ էթնիկ համայնքների կողմից ներկայացվող ծրագրերի: Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է իրենց մեջ ուժ և խիզախություն գտնեն այս հարցը քննարկելու և դեմոկրատական ճանապարհով օբյեկտիվ որոշում կայացնելու:

17. 42-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեն հիշատակում է, որ իր «ուշադրությունը հրավիրվել է նաև հողի սեփականաշնորհման ընթացքում տեղի ունեցած խտրականությանը, հատկապես եզդիների առնչությամբ»: Խորհրդատվական Կոմիտեի ուշադրությունը հրավիրում ենք Պետական երկրորդ զեկույցի 35-րդ պարագրաֆին, որտեղ արտացոլված է այս հարցի սպառիչ պատասխանը:
18. 43-րդ պարագրաֆով Խորհրդատվական կոմիտեն տեղեկացնում է, որ «եզդիների դեպքում գոյություն ունի սոցիալական նպաստների և զբաղվածության մատչելիության խտրականություն, չնայած որ նշվում էր, որ չկա ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց ոչ մի պարբերական հեռացման օրինակ աշխատաշուկայից կամ սոցիալական նպաստներից»: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն, սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերում, դիմումի ձևերում, կամ այլ տեղեկանքներում պահանջ չկա դիմողի ազգային պատկանելությունը հայտնելու վերաբերյալ: «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում» ծրագիրն, ի թիվս այլ բնակավայրերի, իրականացրել են նաև Արագածոտնի մարզի եզդիաբնակ չորս համայնք՝ Սորիկ, Սիփան, Ավշեն, Դերեկ, նույն ծրագրով եզդիներ են ընդգրկվել նաև Արարատի մարզում: Առհասարակ զբաղվածության նման և այլ ծրագրեր են իրականացվում նաև ազգային փոքրամասնություններով /եզդիներ, ասորիներ/ բնակեցված Կոտայքի, Արմավիրի, Արարատի մարզերում:
19. 48-րդ և 118-րդ պարագրաֆներով Խորհրդատվական Կոմիտեն «խրախուսում է իշխանություններին պետական քաղաքականությունը մշակող բոլոր համապատասխան բաժիններում իրենց ամբողջ ջանքերն ուղղելու ... հատկապես կրթությանը, որպեսզի արդյունավետ միջոցներ ապահովվի ազգային փոքրամասնություններ ներկայացնող անձանց հավասար հնարավորություններին» և հորդորում «...իշխանություններին հավաստիանալու, որ «Ռացիոնալացման» գործընթացը չի խոչընդոտում քրդերեն, ասորերեն, եզդիերեն և ռուսերեն լեզուների դասավանդմանը: «Պաշտպանված դպրոցների»-ի կարգավիճակ շնորհելու ողջունելի սովորությունն ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող դպրոցներին և դասարան բացելու համար անհրաժեշտ 30 աշակերտների շեմն ապահովելու անհաժեշտությունից ազատելու գործընթացը պետք է շարունակվի»: Հայաստանի կառավարությանը զարմացնում է Խորհրդատվական Կոմիտեի այս մտահոգությունը: 2006թ. այցելության ժամանակ Խորհրդատվական Կոմիտեի փորձագետները պետք է համոզված լինեին, որ Հայաստանի Հանրապետությունում ապահովված են ոչ միայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կրթության մատչելիության հնարավորությունների հավասարությունը, այլև՝ կրթական ծրագրերում բոլոր հնարավոր դեպքերում մշտապես հաշվի են առնվել ազգային փոքրամասնությունների առանձնահատկությունները: Ռացիոնալացման և օպտիմալացման պետական ծրագիրը մշակելիս և իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվել ազգային փոքրամասնություններով համալրված դպրոցների /դասարանների/ պահպանման և ֆինանսավորման վրա: Ի թիվս այլոց, այդ դպրոցներին թույլատրվել է ՀՀ գործող պահանջների շեղումով /փոքր խտությամբ/ դասարաններ կոմպլեկտավորել: Պաշտպանված դպրոցներին ներկայացվող

պահանջներին չբավարարելու և այդ ցանկում չընդգրկվելու դեպքում անգամ դրանք օգտվել են նույն արտոնություններից: Այնուամենայնիվ, Խորհրդատվական Կոմիտեին տեղեկացնում ենք, որ առաջիկայում որոշ դպրոցների ծախսերը հաշվարկելիս նախատեսվում է բանաձևում գործակիցներ կիրառել մեկ սովորողին ընկնող գումարի նկատմամբ: Նման մոտեցում է նախատեսվում նաև ազգային փոքրամասնություններով կոմպլեկտավորված դպրոցների նկատմամբ:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 5

20. 57. Խորհրդատվական կոմիտեն նշել էր, որ եզդի ազգային փոքրամասնությունը ներկայացնող անձանց դեմ կա հատուկենտ խտրական վերաբերմունք: Խորհրդատվական Կոմիտեն խրախուսում էր իշխանություններին՝ կանխել այդպիսի վերաբերմունքը և տուժածներին ապահովել համապատասխան պաշտպանություն:

21. 60-րդ, 62-րդ, 63-րդ պարագրաֆներում Խորհրդատվական Կոմիտեի կողմից նշված երևույթները չեն համապատասխանում փաստերին: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայության ընթացքում էթնիկ ծագման հետ կապված բռնարարքներ կամ խտրական երևույթներ չկան, իսկ եզդիների նկատմամբ ազգային փոքրամասնության պատկանելության հիմքով խտրականության դրսևորման փաստեր չեն արձանագրվել: ՀՀ Պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ 2003թ. նոյեմբերից շուրջ 60 հասարակական կազմակերպություններ համագործակցում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետ, այդ թվում ազգային փոքրամասնությունների «Ազգությունների միություն» և «Եզդիների ազգային միություն» հասարակական կազմակերպությունները: Նրանք պարբերաբար այցելում են իրենց կողմից ընտրված զորամասեր և առանց որևէ արգելանքի իրականացնում են զինծառայողների սոցիալ-իրավական, կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանների, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված ուսումնասիրություններ: Նրանց կողմից բարձրացված հարցերը Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունում ստանում են համապատասխան լուծումներ: Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հրամանատարական կազմի և վերոհիշյալ հասարակական կազմակերպությունների կողմից շարունակաբար իրականացվում է, ի թիվս այլոց, նաև ազգամիջյան հարաբերություններին և ազգային փոքրամասնությունների հանդեպ բարյացկամությանն ու համերաշխությանն ուղղված աշխատանք: Խորհրդատվական Կոմիտեի 63-րդ պարագրաֆում արված առաջարկը՝ «լրատվամիջոցներում էթնիկ ատելության բորբոքման հնարավոր դեպքերի մանրակրկիտ վերահսկում», գտնվում է իշխանությունների աչալուրջ ուշադրության կենտրոնում:

22. 61-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեի կողմից արտահայտված տագնապն այն մասին, որ մալականների կարծիքով «այլընտրանքային ծառայությունը, ինչպես հիմա է, չի ապահովում զինվորական ծառայությանը համապատասխան այլընտրանք, քանի որ այն համապատասխան չափով չի առանձնացվում զինվորական-կառավարման համակարգից», չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավիճակին երկու հարթությամբ. ա/ Հայաստանում «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքով առկա է այլընտրանքային ծառայության երկու տեսակ՝ «այլընտրանքային զինվորական», և «այլընտրանքային աշխատանքային»; Մալականները, ինչպես և ՀՀ ցանկացած քաղաքացի, կարող են ընտրել այլընտրանքային ծառայության իրենց ցանկալի տեսակը: Պրակտիկայում

միայն մի դեպք է հայտնի, երբ մալականը ընտրել է այլընտրանքային աշխատանքային ծառայությունը: բ/ Այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպման, անցկացման և դրա նկատմամբ վերահսկողության գործառույթների հետ ՀՀ Պաշտպանության նախարարությունն առնչություն չունի, այն կազմակերպում և իրականացվում է ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարությունը և այն նախարարությունը, որի ենթակայության տակ գործում է նշված կազմակերպությունը: Միաժամանակ հայտնում ենք, որ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն անցել է Եվրոպայի Խորհրդի փորձաքննություն:

Շրջանակային Կոնվենիցիա, հոդված 9

23. 69-րդ պարագրաֆի վերաբերյալ: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 29-րդ և 41-րդ հոդվածները վկայում են, որ ՀՀ օրենսդրությունը չի խոչընդոտում ՀՀ այլազգի քաղաքացիներին լինել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կամ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ:
24. 71-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ իշխանությունների կողմից տեղեկացվել է, որ ազգային փոքրամասնությունների տնտեսական հնարավորությունների սակավության փոխհատուցում կարող է լինել արդեն գոյություն ունեցող ալիքների օգտագործումը՝ հեռարձակումը փոքրամասնությունների լեզուներով, և էթնիկ հայրենիքների ու հարևան երկրների հաղորդումների վերահեռարձակումը Կոմիտեն գտնում է, որ այս տարբերակը դժվար կլինի կիրառել այն փոքրամասնությունների համար, որոնք էթնիկ հայրենիք չունեն: Ավելին, Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ էթնիկ հայրենիքներում պատրաստված հաղորդումների հեռարձակումը ոչ միշտ է բավարարում ազգային փոքրամասնության պատկանող անձանց կարիքները: Հայաստանի Հանրապետության իշխանությունները կիսում են այս մտահոգությունը, սակայն սա ներկա պահին դիտվում է որպես ժամանակավոր, լրացուցիչ հնարավորություն, և ոչ թե խնդրի լուծում:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 10

25. 80-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեն «նկատում է, որ տնտեսական դժվարությունների պատճառով փոքրամասնությունների լեզուների օգտագործման իրավունքի իրականացումը երբեմն հանդիպում է որոշ դժվարությունների, ներառյալ փաստաղթերի թարգմանության ծախսերը»: Իրականում «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի համաձայն, փոքրամասնության լեզվով փաստաթղթեր ներկայացնելու դեպքում թարգմանության հետ կապված ծախսերը իրականացնում է վարչական մարմինը: Նույնը վերաբերում է քաղաքացիական դատավարության մասնակցող անձանց: Նույն կերպ «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը: Այս դեպքում վարչական մարմինը ապահովում է թարգմանությունը հայերեն լեզվով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի:

26. 82-րդ պարագրաֆով Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է, որ հայկական իշխանությունները վարչական հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ շարունակեն իրականացնել բաց և իրատեսական քայլեր և լիովին իրականացնեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով հաստատված իրավունքը: Այս կապակցությամբ պետք է ասենք, որ ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներին, ապա դրանք լրացուցիչ կմտցվեն նաև վարչական դատավարության օրենսգրքում, կապված մասնագիտական վարչական դատարանների ստեղծման հետ, որը նախատեսվում է 2007 թվականին:
27. 87-րդ և 88-րդ պարագրաֆների առնչությամբ. «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման առաջարկներ կարող են անել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները և նույնիսկ հասարակական կազմակերպությունները, իրավաբանական և ֆիզիկական անձինք: Օրենքը արգելք չի դնում տեղանունների ճանապարհային ցուցանակներում հայերենի հետ միասին կիրառել փոքրամասնության լեզվով տառադարձությունը կամ փոքրամասնության լեզվի օգտագործումը, և արդեն իսկ գործնականում դրանք Հայաստանում կան: Անշուշտ, միանգամայն ընդունելի է ցուցանակների օգտագործման դեպքերում փոքրամասնությունների հետ խորհրդակցելու առաջարկությունը:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 12

28. 93-րդ և 97-րդ պարագրաֆների առնչությամբ. Խորհրդատվական Կոմիտեն պետք է իմանար, որ Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական հաստատությունների հաստիքացուցակներում նախատեսված է դրույք ազգային փոքրամասնությունների երեխաների թերկոմպլեկտ խմբերի համար: Դպրոցներին առաջարկվել է՝ եթե համայնքներում մանկապարտեզ չկա, ծնողների դիմումների դեպքում ունանալ նախադպրոցական խմբեր: Նախադպրոցական ցանցը կարող է լիարժեք գործել միայն այն համայնքներում, ուր կա ծնողների պահանջը, և դրամական միջոցներ համայնքի բյուջեյում: Նախադպրոցական հաստատությունները գտնվում են համայնքի իրավասության ներքո և նախադպրոցական հաստատության գործունեությունը ապահովում է համայնքը: Հայաստանի Հանրապետության որևէ գերատեսչություն չի մտել որևէ դիմում, որով հաստատվի, որ ազգային փոքրամասնության որևէ համայնքում արգելվել է նախադպրոցական հաստատության գոյությունը: Այնուամենայնիվ, խնդիրն օրակարգից հանված չէ: Մոնիտորինգի խումբը ստացել է ազգային փոքրամասնությունների դպրոցական պրոբլեմների շուրջ իրականացված հետազոտությունը և տեղեկացվել է, որ ընթացքի մեջ է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության հետ դպրոցահասակ երեխաների կրթության լեզվի ուսուցման ծրագրի մշակման և ներդրման գործը:
29. Խորհրդատվական Կոմիտեն 96-րդ պարագրաֆով մտահոգություն է հայտնում, որ «Ազգային փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչներ Խորհրդատվական Կոմիտեի ուշադրությունը հրավիրեցին այն փաստին, որ իշխանությունների կողմից ոչ մի առանձնահատուկ օժանդակություն չի տրամադրվում չափահասներին հայերեն լեզուն սովորեցնելու համար»: Մոնիտորինգն իրականացնող փորձագիտական խումբն այս հարցը չի

քննարկել Հայաստանի Հանրապետության իշխանության ներկայացուցիչների հետ, այլապես կիմանար, որ Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության ստորաբաժանումը հանդիսացող «Լեզվի պետական տեսչությունը» պարբերաբար հայտարարել է բոլոր տարիքային խմբերի համար հայերեն լեզվի անվճար դասընթացներ կազմակերպելու մասին իր պատրաստակամությունը: Այս ծրագիրը չի իրականացվել դիմորդների բացակայության պատճառով: Սակայն ծրագիրն ուժի մեջ է և մշտապես կարող է ընթացք ստանալ սովորել ցանկացողների առկայության դեպքում:

30. 100-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեն «հորդորում է իշխանություններին աչալուրջ լինել փոքրամասնական ծագում ունեցող աշակերտների հանդեպ կատարված, արձանագրված խտրականության և ոտնձգության դեպքերի վերաբերյալ, հատկապես՝ եզդիների»: Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ չնայած ազգային փոքրամասնությունների որևէ խմբից, այդ թվում՝ եզդիներից որևէ բողոք չի ստացվել աշակերտների հանդեպ խտրականության կամ ոտնձգության դեպքերի մասին, խնդիրը գտնվել և գտնվում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության ուշադրության կենտրոնում: Վերջինիս կողմից կազմակերպված մոնիտորինգը այս հարցի շուրջ փաստել է բարյացկամ վերաբերմունքի մթնոլորտ: աշակերտենրի միջև երբեմն հանդիպող վեճերը ազգային և թշնամության կամ անհանդուրժողականության երանգ չեն ունեցել: Թե ուսուցիչները, թե կրթության կազմակերպիչները պարբերաբար զգուշացվում են այս խնդրում աչալուրջ լինելու անհրաժեշտության մասին:

31. 102-րդ պարագրաֆի առնչությամբ. Խորհրդատվական Կոմիտեի փորձագիտական խումբը 2006թ. Հայաստան կատարած այցելության ժամանակ տեսել է, որ հրատարակվել և համայնքներին է բաժանվել եզդիերեն երեք /և ոչ թե մեկ/ դասագիրք, և հրատարակության ընթացքում է ասորերեն երկրորդ դասագիրքը:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 15

32. 124–րդ, 125-րդ և 153-րդ պարագրաֆներով մտահոգություն է արտահայտվել, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները բավարարված չեն փոքրամասնությունների օրինագծի հետ կապված խորհրդակցություններին իրենց մասնակցությամբ և արդյունքով, և տագնապ կա, որ իշխանությունների հետ երկխոսությունում կարող են սահմանափակվել փոքրամասնությունների հնարավորությունները: Այս մտահոգությունները տարօրինակ են, քանի որ փոքրամասնություններին վերաբերող օրենքի նախագիծը իրականում շարադրվել է փոքրամասնությունների մասնակցությամբ: Բոլորը, ովքեր կամեցել են, մասնակցել են ինչպես շարադրման գործընթացին, այնպես էլ տեղի ունեցած բազմաթիվ քննարկումներին: Այս մասին մանրամասն խոսվել է մոնիտորինգի խմբի հետ ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունում կայացած հանդիպման ժամանակ: Ավելին, վարչությունն ինքն է մտհոգություն հայտնել այդ քննարկումներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների պասիվությունից: Առավել զարմանալի է իշխանությունների հետ փոքրամասնությունների երկխոսությունան հնարավորությունների սահմանափակումների վերաբերյալ տագնապը: Իրականում իշխանություններն անում են ամեն ինչ՝ երկխոսության և քննարկումների ծավալն ու ձևերը մեծացնելու ուղղությամբ: Լրացուցիչ պետք է ասել, որ

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում Խորհրդատվական Կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիքը քննարկելիս ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները զարմացել էին վերոհիշյալ եզրակացության կապակցությամբ:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 17

33. 131-րդ պարագրաֆով Խորհրդատվական Կոմիտեն նշում է, որ փոքրամասնությունների «որոշ ներկայացուցիչներ Ազգային Ժողովում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունն ապահովելու համար առավելություն են տալիս քվոտաների կամ նախապես պատվիրված տեղերի համակարգին» և 133-րդ պարագրաֆով «խրախուսում է իշխանություններին միջոցներ մշակել ընտրական մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը բարելավելու համար՝ հատկապես ազգային մակարդակով»: Այս կապակցությամբ պետք է ասել, որ եթե փոքրամասնությունների «որոշ ներկայացուցիչներ... առավելություն են տալիս քվոտաների կամ նախապես պատվիրված տեղերի համակարգին», ապա այլ ներկայացուցիչներ դեմ են այդ սկզբունքին: Նրանք գտնում են, որ Հայաստանի ընտրական համակարգերը խոչընդոտ չեն ազգային փոքրամասնությունների ընտրվելուն և մասնակցությանը: Սակայն ազգային փոքրամասնությունների պրոբլեմները երկրի բոլոր մակարդակների իշխանություններին հասցնելու և ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերում նրանց մասնակցությունն ապահովելու խնդրի լուծման այլընտրանքային ուղիների փնտրտուքը գտնվում է Հայաստանի Հանրապետության իշխանությունների ուշադրության դաշտում:

Շրջանակային կոնվենցիա, հոդված 17

34. 138-րդ պարագրաֆով «Խորհրդատվական Կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ Լեռնային Ղարաբաղի հետ կապված կոնֆլիկտը խոչընդոտում է տարածաշրջանի համընդհանուր անդրսահմանային համագործակցությանը և ցավում է, որ մինչ այժմ խնդրին քաղաքական լուծում չի տրվել» և 139-րդ պարագրաֆով «հույս է տածում, որ կողմերի միջև բարելավված հարաբերությունները և խնդրի արդար ու կայուն լուծումը անդրսահմանային հարաբերությունների համար նոր հնարավորություններ կբացեն և հնարավորություն կընձեռեն կոնֆլիկտի պատճառով տարհանված անձանց կամավոր վերադառնալու իրենց հայրենի հողերը»: Ինչպես հայտնի է, Եվրոպայի Խորհրդին անդամակցության ժամանակ ստանձած հատուկ պարտավորություններով Հայաստանը պարտավորվել է շարունակել ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղի խնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ և օգտագործել իր նշանակալի ազդեցությունը Լեռնայաին Ղարաբաղի վրա հակամարտության կարգավորմանը նպաստելու համար (ԵԽԽՎ կարծիք հ. 221, կետ 13ii): Հայաստանը շարունակում է հավատարիմ մնալ Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական, խաղաղ կարգավորման սկզբունքին և ջանքեր գործադրել այդ կարգավորմանը նպաստելու համար: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության երեք կողմերից մեկն է և ներգրավված կողմ է: Հայաստանը ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացին ներգրավվել է, քանի որ այն ընթանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, և Ադրբեջանի իշխանությունները հրաժարվել են և շարունակում են հրաժարվել բանակցություններ վարել ԼՂՀ ընտրված իշխանությունների հետ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ԼՂ հակամարտության կարգավորման ներկա փուլում, երբ Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով զգալիորեն խորացել է անվստահության ու թշնամանքի մթնոլորտը հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև, լուրջ կարևորություն է ստացել տարածաշրջանային և սահմանային համագործակցությունը, որպես փոխվստահության մթնոլոտի ստեղծման և ամրապնդման միջոց: Հայաստանը մշատապես կարևորել և փորձել է նպաստել հակամարտության կողմերի միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը, որպես հակամարտության համապարփակ կարգավորման նախապայման, այդ նպատակով խրախուսելով ու նպաստելով տարբեր մակարդակների փոխայցելություններն ու շփումները: Հայաստանի դիրքորոշումը պաշտպանում է նաև համաշխարհային հանրությունը՝ նկատի ունենալով հակամարտությունների կարգավորման համաշխարհային փորձը:

c. Եզրափակիչ դիտողությունների կապակցությամբ

35. 150-րդ պարագրաֆի եզրակացությունը խիստ կատեգորիկ է և չի համապատասխանում Հայաստանի իրականությանը: Փոքրամասնությունների կողմից հրատարակվող լրատվամիջոցների մեծ մասը ստանում են պետության օժանդակությունը, իսկ այդ հրատարակությունների լեզուն ընտրում են փոքրամասնություններն իրենք: Ինչպես ներկայացված է Հայաստանի Հանրապետության երկրորդ զեկույցում, երկրում անշեղորեն իրականանում է Շրջանակային Կոնվենցիայի Հոդված 9-ի պահանջները, այդ թվում նաև դրա երրորդ կետը, այն է՝ «Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորությունը»: Այս իմաստով Հայաստանի Հանրապետության իրավական նորմերի որևէ խոչընդոտ չկա ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից գործնական կյանքում նույնպես չի արձանագրվել որևէ խոչընդոտ:

36. 151-րդ պարագրաֆով արված եզրակացությունն այն մասին, որ «ազգային փոքրամասնությունները ներկայացնող շատ անձիք, այդ թվում՝ ոչ ռուսական էթնիկ ծագման, ովքեր իրենց երեխաների համար առավելությունը տալիս են ռուսերեն կրթությանը, մտահոգություններ են արտահայտել հայերեն կրթության նկատմամբ մեծացող ուշադրության առնչությամբ» հիմնավորված չէ: Ինչպես ներկայացված է սույն կարծիքի 7-րդ պարագրաֆում, կրթության լեզվի նախընտրությունը փոքրամասնության /ինչպես և առհասարակ Հայաստանի Հանրապետության որևէ բնակչի/ իրավունքն է:

37. 153-րդ պարագրաֆով արված եզրակացությունն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության էթնիկ փոքրամասնությունների և ազգությամբ ոչ հայ քաղաքացիների վերաբերյալ» օրինագիծը արժանացել է քննադատության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից... ըստ որի կարող են սահմանափակվել իշխանությունների հետ ազգային փոքրամասնությունների երկխոսության հնարավորությունները», չի համապատասխանում իրականությանը: Օրինագիծն այդպիսի սահմանափակման առիթ չի տալիս, Խորհրդատվական

Կոմիտեն իր այդ կարծիքը չի հիմնավորում օրինագծի դրույթներով և, ինչպես ասվել է սույն կարծիքի 10-րդ պարագրաֆում, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդում ներկայացված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները չեն կիսում այդ կարծիքը:

d. 155-րդ պարագրաֆում տեղ գտած հանձնարարությունների կապակցությամբ

Հայաստանի հանրապետության իշխանություններն իրենց հնարավորությունների շրջանակներում պատրաստակամ են շարունակելու Շրջանակային կոնվենցիայի ոգուց և իրավական նորմերից բխող պարտավորությունները: Ավելին, դրանք լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ազգամիջյան հարաբերությունների ձևավորման քաղաքականության գործնական տրամաբանությանը: Այդպիսիք են նաև Խորհրդատվական Կոմիտեի 2-րդ կարծիքի հանձնարարականների մեծ մասը: Հարկ ենք համարում անդրադառնալ միայն «Երաշխավորել, որ հայերեն լեզվի ուսուցման նկատմամբ մեծացող ուշադրությունը չի խոչընդոտի ազգային փոքրամասնությունները ներկայացնող անձանց կողմից ռուսերեն լեզվով կրթություն ընտրելու հնարավորությունը» հանձնարարականին, շեշտելով, որ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքը և կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության գործնական քաղաքականությունը այդպիսի երաշխիք պարունակում են::